65. ***Գառնու ձորը*** սկսվում է Գեղարդավանից և Ազատ գետի հոսանքով հասնում է մինչև Դվին, ըստ Ալիշանի՝ մինչև Խոր Վիրապ:

66. Մեզ թվում է պատմիչը Ուրծաձոր ասելով հասկանում է Վեդիից հյուսիս-արևելք ընկած տարածքները, որտեղ Պարույր Սևակ գյուղն է և Զանգակատունը: Իսկ Ալիշանը Ուրցաձորը համարում է Վեդի ավանը:

67. **Բասենը** Մեծ Հայքի Արարատ նահանգի գավառներից է, որ տարածվում է Արաքսի վերին հոսանքների շրջանում: Մի ժամանակ սահմանը հասել է մինչև Վանանդի շրջանը (Կարս): Բասենը բաժանվում է երկու մասի՝ Վերին և Ներքին:

68. ***Խնուսը*** Կարինի (Էրզրումի) վիլայեթում քաղաք է նույնանուն շրջանում:

69. Մանազկերտը Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Ապահունիք գավառի կենտրոնն է:

70. ***Արծկեն*** Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի քաղաքներից է Վանա լճի հյուսիսային ափին:

71. ***Արճեշը*** Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Աղիովիտ գավառի քաղաք է: Վանա լճի ափին, որ այժմ մեծ մասամբ ջրի տակ է անցել:

72. ***Բերկրին*** Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Առբերան գավառի քաղաք է Վանից 77 կմ արևելք: Մինչև 1915 թիվը Բերկրիում բնակվում էր ավելի քան երկու հազար հայ:

73. ***Հայամավուրքը*** եկեղեցական գիրք է, որտեղ ըստ կարգի գրված են սրբերի վարքերն ու մարտիրոսությունները: Մի ժամանակ մեր եկեղեցիներում ըստ տոնացույցի կարդում էին այդ վարքերը: Վարքերը սկսվում էին.«Յայսմ աւուրք տօնն է սրբոյ Գրիգորի Նարեկացւոյ»: Յայսմ աւուրքից առաջացավ այսօրվա «Հայամավուրքը»:

74. ***Կայանի ձորը*** Մեծ Հայքի Գուգարք նահանգի Ջորոփոր գավառն է Աղստև գետի միջին հոսանքում: Այս գավառում է գտնվում հռչակավոր Մակարավանքը Աչաջուր գյուղի մոտ:

75. ***Միափորը*** գավառ է և գյուղ այժմյան Տավուշի մարզում: Հնում Շամշադինը բաժանվել է երեք գավառի՝ Միափոր, Տավուշ, Ջական:

76. ***Աղջո վանքը*** վանքային համալիր է Կոտայքի շրջանի Գեղարդավանից 7 կմ հարավ Ազատ գետի ձախ ափին՝ բարձունքի վրա: Գլխավոր եկեղեցին կառուցվել է 13-րդ դարում:

77. ***Աստապատը*** Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Նախիջևան Գավառի գյուղերից է՝ Արաքսի ձախ ափին:

78. ***Ջուղան*** Արաքսի ձախ ափին տեղակայված հարուստ քաղաք էր 17-րդ դարում: Գտնվում էր Մեծ Հայքի Սյունիք նահանգի Երնջակ գավառում: 16-17-րդ դարերում զարմանալի զարգացած ու փարթամորեն հարուստ քաղաք է եղել, ունեցել է մինչև 40 հազար հայություն: 1604 թվին

Շահ Աբասը Կենտրոնական Հայաստանի հայերի հետ գաղթեցրեց նաև Ջուղան և քաղաքը հիմնահատակ կործանեց, հրդեհեց: Իբրև շնորհ Ջուղայի հայերի համար Սպահանի մոտ կառուցեց մի այլ Ջուղա՝ Նոր Ջուղա անունով:

79. ***Ղզլբաշները*** իրանական թուրքեր են: Այդպես են կոչվել կարմիր վարշամակով գլուխները կապելու պատճառով:

80. ***Դլաք, վլաք*** իրանական փոքրաթիվ ցեղեր են:

81. ***Անուշ (Անհուշ) բերդը*** Պարսկաստանի հարավում բերդամրոց է, որտեղ կալանավորվածը անհուշ ցմահ մնում էր այնտեղ: Այստեղ կալանավորեց պարսից Շապուհ արքան հայոց Արշակ Բ թագավորին:

82. ***Կավակերտի*** մասին Ալիշանը ասում է, թե Արարատյան դաշտում Հրազդանի ափին գյուղ է եղել, այժմ տեղը հայտնի չէ:

83. ***Սապատի,*** ըստ երևույթին պատմիչը Սապաթը շփոթում է Սահաթի հետ, որ ըստ Ալիշանի՝ մերձագույն սահմաններն են կոչվել:

84. ***Աղվանք*** ասելով պատմիչը Արցախն է հասկանում:

85. ***Գանձակը*** (Գյանջան) Մեծ Հայքի Արցախ (Փոքր Սյունիք) նահանգի քաղաքներից է, որ կոչվել է Կիրովաբադ (այժմ Գյանջա):

86. ***Գանձասարը*** Արցախի Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտ բարձունքի վրա կառուցված մի ճարտարապետական հոյակապ վանքային կերտվածք է, որի կառուցումը սկսվել է 13-րդ դարի սկզբին (1216 թ.):

87. ***Սաղմոսը*** Աստվածաշնչի Հին կտակարանի գրքերից է, որի հեղինակը համարվում է Իսրայելի թագավոր Դավիթը:

88. ***Խնկելոռձորը*** կամ ***Ջորագյուղը*** գտնվում էր Երևանի Սուրբ Սարգիս եկեղեցուց ներքև Հրազդան գետի ձախ ափին՝ ձորի մեջ:

89. ***Կվաշը*** և ***Վժանը*** (Ուջան) Աշտարակի շրջանի գյուղերից են:

90. ***Կարբին*** Աշտարակի շրջանի խոշոր գյուղերից է, պատմիչը այն կոչում է գյուղաքաղաք:

91. ***Քասաղ գետը*** սկիզբ է առնում Փամբակի լեռներից, անցնում է Նիգ գավառով, Աշտարակով, Օշականի մոտով մտնում է Արարատյան դաշտը և խառնվում է Մեծամորին:

92. ***Եկբատանը*** եղել է մարերի մայրաքաղաքը Իրանի արևմուտքում: Նրա տեղը կառուցվեց Համադան քաղաքը:

93. ***Թոխաթը*** Թուրքիայի քաղաքներից է, որ կոչվում է նաև Եվդոկիա: 1915 թվին այս քաղաքում հայերի թիվը 14 հազար էր: Եվդոկիայի գավառում կար 24 հայկական գյուղ: Եվդոկիան Սեբաստիա տանող ճանապարհի վրա է:

94. ***Շամիրակերտը*** Վանն է:

95. ***Կաղզվանը*** գտնվում է Արաքսի վերին հոսանքներում, աջ ափին, այժմ քաղաք է միևնույն գավառում: Մեծ Հայքի Այրարատ նահանգի